ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ
ARMENIAN CARITAS

www.caritas.am
info@caritas.am
caritas@caritasarmenia.org
(+374 312) 5 72 01

«Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ
ՀՀ, ք.Գյումրի 3118, Հ.Սարգսյան փող., նրբանցք 3, տուն 8

"Armenian Caritas" benevolent NGO
8 H.Sargsyan street, side-street 3, Gyumri, 3118, Armenia


AC-190-20

01 սեպտեմբերի, 2020

Գյումրի համայնքի ղեկավար
պարոն Սամվել Բալասանյանին

Հարգելի պրն Բալասանյան,

2019թ-ի նոյեմբերից «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ն իրականացնում է «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական եւ համապասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Գերմանիայի կառավարության տնտեսական համագործակցության ու զարգացման նախարարության կողմից Կարիտաս Գերմանիայի միջոցով: Ծրագիրն իրականացվում է Շիրակի մարզի թվով 7 դպրոցներում և 7 մանկապարտեզներում:

Ծրագրի կարևոր բաղադրիչներից են թիրախ դպրոցների և մանկապարտեզների ադմինիստրատիվ, ուսուցչական/դաստիարակչական անձնակազմերի վերապատրաստումները, ինչպես նաև յուրաքանչյուր դպրոցում և մանկապարտեզում մեկական դասասենյակի/սենյակի կահավորումը՝ ներառական որակյալ կրթություն իրականացնելու նպատակով: Վերջինս իրականացվելու է համապատասխան ներառականության սկզբունքներին և նպաստելու է, որպեսզի ուսուցիչները կարողանան կիրառել դասավանդման նոր մեթոդաբանություն՝ հիմնված հավասարության, մասնակցայնության սկզբունքների վրա՝ խրախուսելով թիմային աշխատանքները, համագործակցությունը և ներառումը: Ըստ այդմ, կահավորման հիմնական ուղղվածությունը լինելու է ճկունությունը, շարժունությունը և հարմարավետությունը:

Յուրանքչյուր դպրոցում և մանկապարտեզում կահավորման միջին արժեքն ըստ նախահաշվարկների կազմում է 1,083,000 ՀՀ դրամից մինչև 1,131,000 ՀՀ դրամ՝ կախված հաստատության կարիքներից: Կահավորման գումարի 50%-ը տրամադրում է «Հայկական Կարիտաս»-ը, 20%-ը, ըստ դոնորի պայմանի, ներդնելու են դպրոցներն ու մանկապարտեզներն իրենց խնայողություններից, իսկ մնացյալ 30%-ը ակնկալում ենք հայթհայթել համայնքապետարաններից եւ այլ ֆոնդերից՝ ինչպիսիք են բանկերը, բիզնեսները և անհատ բարերարները:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԵԼ Է 02 09 2020 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 12361
Էջ 1 - 2 հց

Քանի որ մանկապարտեզները չունեն սեփական բյուջե և գտնվում են համայնքապետարանի հաշվեկշռում, ուստի սույն նամակով դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով 50% ներդրում 4 մանկապարտեզների կահավորման համար, որը յուրաքանչյուր մանկապարտեզի համար կազմում է 500,000 ՀՀ դրամ: Ընդհանուր հաշվով համայնքապետարանից ակնկալում ենք 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

«Հայկական Կարիտասը» երաշխավորում է ստացված գումարի օգտագործման թափանցիկությունը, ինչպես նաեւ համաֆինանսավորող կողմի տեսանելիության ապահովումը՝ կազմակերպության հանրային կապերի գործիքների միջոցով:

Կից ուղարկում ենք թիրախ մանկապարտեզների ցանկը, կահավորման փաթեթը, ինչպես նաև բյուջեները:

Խնդրում ենք նշանակել հանդիպման օրը՝ սույն ծրագիրը մանրամասն քննարկելու համար:

Կանխավ շնորհակալություն՝

Հարգանքով՝

Գագիկ Տարասյան
Գործադիր տնօրեն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ
Armenian Caritas Benevolent Organization
05517